



World Vision Armenia

SGP The GEF Small Grants Programme



Lore Eco Club

ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ԱՐԵՎԱՅԻՆ ՉՈՐԱՆՈՅ ԱՐԵՎԸ ԲՈՒՆՈՒՆՍ Է

Արդիական արևային ջորանոցների կիրառումը ավանդական «բաց» ջորացման և էլեկտրական կամ գազօգտագործման համեմատ ունեն մի շարք առավելություններ.

- էներգախնայողությունը (չի օգտագործում էներգակիրներ),
- արևային ճառագայթները չեն դիպչում մրգերին (պահպանում է արտաքին-առևտրային տեսքը, ավելի սննդային է),
- արտաքին գործոնների բացակայություն (փոշի, մրջյուններ, այլև),
- նվազ ժամանակատար է (ջերմաստիճանը հասնում է 70 °C),
- նվազ աշխատատար է (պետք չէ պարբերաբար շրջել կամ հավաքել, հետևել եղանակային պայմաններին),
- կիրառելի է խոնավ պայմաններում և արևի նվազ պահանջկոտ է:

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ






1. Առաջին հերթին կառուցվում է ջորանոցը կրող կաղապարը իր ոտնակներով (հնարավոր է պատրաստել փայտից կամ երկաթից): Ոտնակների բարձրությունը պետք է ապահովի մոտ 30° քեքություն՝ բնական եղանակով օդափոխությունը ապահովելու և կարկտահարումից ապակին պաշտպանելու համար:

2. Կառուցվում է շրջանակի ներքևի ստատիկ մասը: Փայտե շրջանակի ստորին մասում տեղադրվում է շերտավոր քիթեղ (1մX1մ), որը կապահովի օդափոխությունը:

3. Նույն շրջանակի մեջ՝ միջնամասում տեղադրվում է չժամգոտող երկաթից կամ կապրոնից ցանց, մրգերը և բանջարեղենը տեղավորելու համար:

4. Նույն շրջանակի վերին շարժական մասը կառուցվում է հետևյալ կերպ՝

- փայտե կաղապարի (1մX1մ) ներքևի մասից մեխերով ամրացնում ենք 0.5-1մմ մետաղյա քիթեղ, որի արևային կողմը ներկված է սև, ոչ փայլուն ներկով,
- փայտե կաղապարի (1մX1մ) վերին մասին



սիլիկոնի միջոցով ամրացվում է 5-7մմ հաստությամբ ապակի (1մX1մ), իսկ փայտե շրջանակի վրա՝ բռնակ (շրջանակը բացելու համար):

5. Փայտե երկու շրջանակները ամրացվում են իրար ծխնիների (Петли) միջոցով և առանց ամրացման տեղադրվում ջորանոցը կրող ոտնակներով կաղապարի վրա:

Սահումը կանխելու համար ներքևի շրջանակի վերին մասում տեղադրվում է փայտե կամ երկաթե պատնեշ:

Չորանոցի չափերն են՝ 100սմx100սմ, 30% քեքությամբ արևի ճառագայթները լավ կլանելու համար:

Հարցերի համար դիմել՝
հեռ.՝ (374 093) 31 51 08, (374 256) 22 4 77
Էլ. կայք՝ www.lore.am, www.dry.am